ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԼԷՕ։ – ՍՊԱՆԻԱՆ ՀԱՑՐԸ։ Ժողովրդական աւանդութիւններից։ Նուշի, տպ. Հայոց Հոգևոր տեսչութեան։ 1891 թ.։ Փոքր քառածալ, 38 երես, տառ № 12, գինն է 5 կոպ։

Բաֆֆին իւր «Խամսայի մելիքութիւնների» մէջ ներկայացրեց այն պրոցեսը, թէ ինչպէս Ղարաբաղի հինգ հայկական իշխանութիւնները մէկը միւսի յետևից ջնջուեցին, ամենից առաջ թոյլ տալով որ իրանց կողքին, հէնց իրանցից մէկի հողի վերայ բուն դնէ, ամէ ու զօրանայ խաչնարած թուրքերից Փանահը, որ և յետոյ Շուշայ խանը։ Առաջին անգամից մարդ մնում է զարմացած թուրքի այդ յանդուգն ձեռնարկութեան վերայ, և աւելի զարմանում է թէ՝ ինչպէս այդ նոր բուն դրած խանութիւնը կարողանում է զօրանալ կարճ միջոցում և իւր ուժով գերազանցել հայ մելիքութիւններին այն աստիճան, որ մտածէր արդէն նոցա հպատակեցնել իրան։ Այդ պատմութիւնը հայկական ոչ հեռու անցեալի ամենատխուր վկայութիւններից մէկն է՝ թէ որ աստիճանի ընկած պէտք է լինէր պետական անկախութեան զգացմունքը թէ հայ-մելիք-իշխանների և թէ ժողովրդի մէջ 18-երորդ դարում։ Եւ նոյն իսկ անպիտան Մելիք-Շահնազարը, որի անունը ամօթանք է բերում ամէն հայի, բայց մանաւանդ հայ ղարաբաղցուն, նորա անպատիժ մնալը իւր ժամանակակիցների կողմից բաւականաչափ ապացուցում է պետական գաղափարի բացակայութիւնը հայ մելիքութիւնների մէջ 18 երորդ դարում թէ իշխանների և թէ ժողովրդի կողմից, որոնք ընդհանուր առմամբ, այսպէս ասած՝ իրար արժանի էին։

Մի այդպիսի ժամանակ և այդպիսի «իշխանութիւնների» մէջ ժողովուրդը ինքը չարտադրեց պետական գաղափարով մարդիկ։ Հայ խելքը այդքան բարձր բաների համար շատ էր տափակացել։ Փանահ խանի յաջորդ՝ նորա որդի Իբրահիմ խանի ժամանակ, երբ Շուշայ խանութիւնը աւելի ևս սպառնալի դարձաւ, Ղարաբերդի համիմատապէս ամենից թրքատեաց մելիքութեան

ժողովուրդը գոնէ մի կերպ և առժամանակ պաշտպանում էր անհատական քաջերով։ Դոցանից մի երկուսի լիշատակը աւանդութիւնը վառ է պահել՝ Աւագ վարդապետ և Նորա ընկեր «աւազակ» Արզումանը կամ ժողովրդի ասածով՝ դալի-Մահրասան և Թիւլի-Արզումանը, որոնք ժողովրդի կողմից վրէժխնդիր էին լինում Իբրահիմ խանին թուրքեր կոտորելով, կազմակերպւած լինելով որպէս մի աւազակային խումբ։ Լէօի «Սպանւած հայրը» այդ աւանդութիւնն է պատմում։ Սպանւողը այդտեղ Արզումանի ծերունի հայր Սարգիս-աղերն է, որին Իբրահիմ խանը կալանաւորել էր տւել և խոստացել՝ ազատ թողնել, որ գնա ու խրատի իւր որդուն՝ հանգիստ կենալ. բայց Նորան կոտորկոտոր է անել տալիս, երբ այդ հայրը հրաժարւում է Արզումանին իւր որդի անւանելուց, ասելով որ եթէ սա իւր արժանի որդին լինէր՝ Իբրահիմը խան չէր լինիլ։

Պատմւածքը շատ լաջողւած է։

Ա. Ա.

ՇՁԵԴՐԻՆ. —«ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ»։ Թարգման. Խ. Մ., Թիֆլիս, 1891 թ. տպարան «Արօր», 24 երես. գինն է 5 կոպէկ։

Օրիորդ Աննա Գուբինան, ստանալով ուսուցչական վկայական, ամսական 15 ռուբլիով գիւղական վարժուհու պաշտօն գտաւ։ Հէնց առաջի օրերին, գիւղի հարուստներից մէկը՝ Դրոզդը, որը խմիչքեղէնների առևտուր էր անում, եկաւ ուսումնարան, բերելով օրիորդի համար ընծայ. չը կամենալով զայրացնել այդ աղդեցիկ մարդուն, օրիորդը ընդունում է Նորա բերածը։ Դրոզդը երես է առնում, սկսում է դիմել օրիորդին երկդիմի ակնարկութիւններով, «իսկ մի անդամ էլ Դրոզդը օրիորդի ականջով գցեց.—Էհ, օրիորդ, օրիորդ, ձեր քաշովը մի ոսկի կը տալի, եթէ»... Նոյնքան աներես է և գիւղական գրագիրը, բայց օրիորդը տանում է այդ բոլոր անպատւութիւնները, վախենալով զրկւել իւր տեղից։ «Ապրիլ ամսին իւր գիւղական կալւածքը եկաւ կալւածատէր Անդրէաս Ագին, որը միևնոյն ժամանակ ուսումնարանի գլխաւոր հոգաբարձուն էր։ Գիւղ գալու հէնց առաջի օրը Ագինը գնաց դպրոց .այցելութեան, տեսաւ դպրոցը, հաւանեց, գովեց կարդ ու կանոնը։ Դպրոցից դուրս դալիս, Ագինը ուղղակի ասաց, թէ ինքը շատ ուրախ է, որ իւր դպրոցում այդպիսի սիրուն վարժուհի կայ։ Այդ օրից սկսած, երիտասարդ հոգաբարձուն մաշում էր դպրոցի չէմքը», նա այցելում է մի անդամ օրիորդին և Նորա բնակարանում և նոյն օրը երեկոյեան հրաւիրում է Նրան թէյի. օրիորդը սկսում է գնալ դալ, բայց Նորա «պատմութիւնը» երկար չը քաշեց՝ դալթակղեցուցիչը շուտով հեռանում է գիւղից, թողնելով օրիոր